

## ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (14.09.2015-10.12.2015) ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման ութերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 չորսօրյա և 4 արտահերթ նիստ՝ 3-ը ՀՀ կառավարության նախաձեռնությամբ և 1-ը՝ ԱԺ պատգամավորների: Հերթական նստաշրջանի ավարտից հետո գումարվել է 1 արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 172 հարց, որից 106-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 58-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, 1-ը համատեղ, իսկ 6-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված էր Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը: Օրակարգի միջազգային պայմանագրերի վավերացման մասին բաժինն ընդգրկում էր 42 միջազգային համաձայնագիր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 28 հարցով, այդ թվում՝ 17 ՀՀ կառավարության նախաձեռնություն, 7 ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 4 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 6 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 248 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 188-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի, դրա ընթացքում գումարված արտահերթ նիստերի և աշնանային նստաշրջանից հետո գումարված արտահերթ

Նստաշրջանի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 54-ը (49-ը ՀՀ կառավարության (3-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), իսկ 5-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած նախագծեր էին): Միջազգային պայմանագրերից զատ քննարկվել է 8 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց: Իմջպես նաև քննարկվել և առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ ԱԺ-ի մեկ օրենքի նախագիծ, որը ԱԺ պատգամավորների կողմից համարվում էր արտահերթ: Ամբողջությամբ ընդունված 47 օրենքներից կամ օրենքի նախագծերի փաթեթներից 2-ը մայր օրենք են, որոնք ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին:

#### Նստաշրջանի ընթացքում՝

- ԱԺ-ի կողմից ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու հարցը:
- ԱԺ-ն ընդունեց «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին օրենքը»:
- Ժառանգություն խմբակցության ղեկավար Ռուբիկ Հակոբյանը հայտարարեց, որ վայր է դնում խմբակցության ղեկավարի լիազորությունները:
- Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի որոշմամբ՝ համամասնական ընտրակարգով, ՀՀԿ-ի ընտրական ցուցակից ԱԺ պատգամավոր գրանցվեց Կարեն Բեքարյանը:
- ԱԺ-ն ընտրեց Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամներին:
- Քննարկվեց և ընդունվեց ի գիտություն՝
  - Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2014 թվականի գործունեության մասին հաղորդումը:
  - Հանրային հեռուստառադիոընկերության 2014 թվականի գործունեության Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հաղորդումը:
  - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2014 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (գնաճի հաշվետվությունը):
  - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2015 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիրը:

- «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» զեկույցը :
- Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը:
- Քվեարկությամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2016 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 15 գրավոր և 53 բանավոր հարցով: Հնչել է 96 պատգամավորական հայտարարություն, որոնցից 27-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանների ընթացքում վավերացվեց 18 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ Երևանի քաղաքային լուսավորության ծրագրը, ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև միջուկային անվտանգության համաձայնագիրը, հանրային առողջությանը վերաբեվող համաձայնագրեր՝ ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի հետ, համայնքների զարգացմանը և ենթակառուցվածքների արդիականացմանը ուղղված ծրագրեր, ինչպես նաև երկու խոշոր վարկային համաձայնագրեր: